ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 206
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Զովունի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Նաիրի համայնքի (Զովունի բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Զովունի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-029-0153-0023 կադաստրային ծածկագրով 0.122966 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հնդավոր հող	07-029-0153-0023 կադաստրային ծածկագրով 0.122966 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Զովունի բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «26» «հունիսի» 2025 թ.